

ՀԱՅ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐԸ
ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ*

Էդիկ Մինասյան, Արարատ Վարդանյան

1988թ. փետրվարին սկսված Արցախյան շարժումը հայոց ազատագրական պայքարի, Երկրապահ կամավորականների գործունեության պատմության մեջ նոր է բացեց: Արցախի ազատագրման համար մղվող պայքարը միավորեց համայն հայությանը, հետզինեւել ընդլայնվելով՝ համաժողովրդական բնույթ ստացավ:

Այդ պայքարին հենց սկզբից սատար կամզնեցին Երկրապահ կամավորական ջոկատները: Այդ ջոկատները ստեղծվել էին 1988թ. Սումգայիթյան ցեղասպանությունից հետո: Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում Աղբեջանի կողմից սանձագերծած հարձակումները, Խորհրդային գործի հետ միասին իրականացրած բռնարարքները ստիպեցին մեր ժողովրդի լավագույն զավակներին կիսատ թողնելու իրենց գործերը, ուսումը, ստեղծելու կամավորական ջոկատներ, կամ մտնելով նրանց կազմի մեջ՝ մեկնելու հայրենիքի սահմանամերը մեր ժողովրդի իրավունքները պաշտպանելու, իսկ ովքեր մնացին հանրապետությունում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին:

Իր աչքի առաջ ունենալով՝ անցյալի պատմության դառը փորձը՝ հայ ժողովուրդը ուսուի կանզնեց այս անգամ միասնական ու միակամ: Հայ Երկրապահ կամավորականների դիվիզիայի առաջին հրամանատար գորավար Անդրանիկի և նրա ֆիդայի ընկերների անունն ու փառքը, բուրք ոսկի դեմ նրանց պայքարը ներշնչանքի աղբյուր հանդիսացան հայ Երկրապահ կամավորականների համար նաև դարավերջի Արցախյան ազատագրական պայքարի օրերին: Նրանց և հայոց ազատագրական պայքարի մյուս նվիրյալների անունները ժողովրդի ազատագրական ոգին մշտավար ու մշտադիր պահող կամբեղներ էին, որոնց լույսերով բռցավարված հայ քաջերը օրիասական պայքարի մեջ մտան թուրք-ազերական թշնամու դեմ՝ կորցրած հայրենիքի մի հատվածում՝ Արցախ աշխարհում:

Հայ ազատամարտի հերոսների, կամավորական նվիրյալների անունները շրբներին, մահը աչքի առաջ նրանք շարունակեցին սկսած ազատագրական պայքարը՝ այն հասցնելով՝ հաղթական ավարտին, իինավուրց Արցախում պահպանելով մեր անկախությունն ու ազգային արժանապատվությունը:

1988թ. սկզբից ինքնապաշտպանական Երկրապահ կամավորական ջոկատներ էին կազմակերպվում ամբողջ Հայաստանում, Արցախում, որոնց թիվն անցնում էր 500-ից:

Խոսելով հայոց բանակաշինության փուլի, ՀՀ կամավորական ջոկատների կազմավորման մասին՝ ՀՀ նախկին պաշտպանության նախարար, ներկայիս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշել է. «Հայոց բանակի առաջին փուլն ընդգրկում է 1988թ. փետրվարից մինչև 1992 մայիսը, երբ դարձարադան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը՝ դարձավ հրատապ խնդիր: Առաջին փուլի առանձնահատկությունն այն էր, որ հայ հասա-

*Հոդվածն ընդունվել է 23.02. 2015:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ՍՍՀ պատմության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

րակության մտածողության մեջ հասունացավ մի գիտակցություն, քստ որի՝ միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվտանգության երաշխիքը: Այս ժամանակահատվածում «Բանակ» էին համարվում իրարից անկախ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները, որոնք, ռազմականացված հիմնարկներից, հակակարկուային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասընթացներից ու բոլոր հնարավոր այլ վայրերից գենք հայքայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ անհավասար կրիվ մողելու հակառակորդի դեմ: Հակառակորդը, Սումգայիթում, Կիրովաբարում, Բաքվում հայերի ջարդեր, զանգվածային տեղահանություն իրականացնելով, այլևս չեր խորշում ոչնչից և ողջ քաղաքակիրք աշխարհի առջև բացահայտ ռազմարշավ էր սկսել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ: Այս ամենն իրագործվում էր կոմունիստական վարչակարգի ակնհայտ թույլտվությամբ, իսկ երեմն նաև գործուն մասնակցությամբ[1]: Դրա ամենավառ ապացույցը եղավ 1991թ. ապրիլայիս ամիսներին իրականացրած տիսրահիշակ «Կոլցո» օպերացիան, որի արդյունքում հայքարակիվեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը: Դրան հաջորդեցին Հաղորդի շրջանի մեկ տասնյակից ավելի գյուղերի և Բերդաձորի ենթաշրջանի ողջ հայքալության բռնի տեղահանումները:

Բոլոր այս ճնշումների դեմ-հանդիման կանգնած էին հայ կամավորական ջոկատները, որոնց գործողությունները տարերային էին, չկորոդիմացված և տեղի էին ունենում Հայաստանի և Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում: Դրանք այն կենսունակ սալմն էին, որոնցից անկախության հոչակումից անմիջապես հետո պիտի ժնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները: Կամավորակամները, որոնք ողջ ժամանակ անց արդեն սահուն կերպով իրենց տեղը պետք է գիտեին կանոնավոր գորամիավորումներին, փայլուն կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից որված խնդիրները: Նրանց մի մասը նահատակվեց սիրալի մարտերում. Սովուս Գորգիսյան, Թաթով Կրպեյան, Զիվան Աբրահամյան... և ուրիշներ, իսկ մյուսները, արդեն 1992-ից սկսած, մասնակցելով նաև պատերազմական լայնածավալ գործողություններին, նորաստեղծ կանոնավոր բանակի հետ միասին կրեցին մեր առաջին ռազմական հաղթանակը: Ցավոք, շատերն իրենց կյանքի գնով. Մոլոք Մելքոնյան, Յուրա Պողոսյան, Աշոտ Ռուզան, Պետրոս Ղևոնյան և բազում այլ քաջեր[2]: Երկրապահ կամավորական ջոկատների համար չափազանց ծանր տարի էր 1990 թվականը, երբ Աղբեջանի իշխանությունը, հրահանգելով ուժեղացնել հարձակումները և բռնությունները Արցախում և Հայաստանի սահմանամերձ գոտիներում, սկսեց հայքարակիման գործընթացը:

Սահմանամերձ գոտում ընդհարումների լուրջ ճակատ ստեղծվեց: Ինքնապաշտպանության մղումով ստեղծված հայ կամավորական աշխարհագորային ջոկատներն ու կազմակերպությունները արժանի հակահարված տվեցին թշնամուն: Աղյախի ջոկատներից էին Էջմիածնի և Արարատի ինքնապաշտպանական կամավորական ջոկատները՝ «Մալաթիան», «Վրիժառուները», «Արաբոն», «Տիգրան Մեծը», «Զորավար Անդրանիկը», «Սասունցի Դավիթը», «Գարեգին Նժդեհը», «Դավիթ Բեկը», «Մուշը», «Ակաշկերտը», «Գարնին», «Միխթար Սպարապետը», «Սասնա ծռերը», «Հայոց ազգային բանակը» (ՀԱԲ), «Անկախության բանակը» ռազմագաղաքական միավորումներն ու կազմավորումները և այլն: Նրանք անձնվիրաբար կասեցրին Երասխավանի, Վայքի, Մեղրու, Գորիսի, Կապանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի, Վարդենիսի և սահմանամերձ այլ շրջանների վրա կատարված հարձակումները: Երասխի ինքնապաշտպանական մարտերը տեղի ունեցան 1990թ. հունվարի 17-ից 19-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ը: Հակառակորդը, օգտագործելով իր հարմարավետ դիրքը, Նախիջևանի Հանրապետության Սահմանադրության հիմքում էր Արարատի շրջանի սահմանամերձ գյուղերը՝ պատճառելով մարդկային և նյութական զգալի կորուստներ: Մի քանի օրվա ընթացքում հակառակորդը Երասխի սահմանի երկարությամբ մեծ քանակությամբ գինված ուժերու ու գինտեխնիկա էր կուտակել: Արարատում, Արտաշատում, Սամաստում, Նոր Հաճնում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում և այլ վայրերում կազմակերպվեցին ինքնապաշտպանական ջոկատներ և գինվելով ինքնաշխն գենքերով մեկնեցին Երասխ: Զոկատներից և առանձին կամավորականներից կազմավորվեց երկրապահ կամավորականների աշխարհագորային գումարտակը՝ Վազգեն Սարգսյանի ընդհանուր հրամանատարությամբ: Հունվարի 18-ին և 19-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը, քաջություն ցուցաբերելով, վճռական հարձակման անցնելով, հակառակորդին դուրս մղեցին գրեթե բոլոր ռազմավարական բարձունքներից՝ հետո մղելով նրան դեպի Նախիջևան, ոչնչացնելով բոլոր կրակակետերը[3]:

Երասխի մարտերում գոհվեցին Ս. Գորգիսյանն ու Ե. Սաղումյանը[4]:

Հայաստանում և Արցախում կազմավորված երկրապահ կամավորական ջոկատների համար իսկական փորձություն էր նաև 1991 թվականը, երբ նրանք կրվում էին ոչ միայն աղբեջանական հաստուկ նշանակության ջոկատայինների դեմ, այլև նրանց օգնող ու աջակցող խորհրդային գորքերի դեմ, որոնք, մասնակցելով բռնարարքներին, հրականացնում էին ոչ միայն Հյուսիսային Արցախի՝ Գետաշեն-Մարտունաշենի, այլև մյուս հայկական բնակավայրերի հայարավիման գործը:

1991թ. առաջին երեք ամիսների ընթացքում աղբեջանական օնօնը հրահրել էր 59 գինված սաղուանը, որից 20-ը ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գորքերի մասնակցությամբ: Ապրիլ ամսվա ընթացքում իրավիճակն օրեցօր սրելուց հետո, ապրիլի 30-ի առավոտյան մերքին գորքերի ստորաբաժանումներն ու օնօնը տանկերի, գրահամեքենաների ու ռազմական ուղղաթունների աջակցությամբ գործեցին Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի վրա: Այդպես սկսվեց տիրահարչակ «Օղակ» գործողությունը, որը, արագորեն տարածվելով, ընդգրկեց ամբողջ Հյուսիսային Արցախը, Հաղորդի շրջանն ու Քերդածորի Ենթաշրջանը, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերը: Հատկապես ժամանակ վիճակ էր Նոյեմբերյանի, Տավուշի, Կապանի ու Գորիսի շրջաններում: Մարտունաշենի բնակչությունն ու կամավորները կրվով նահանջեցին: Զոհվեց դեպի Գետաշեն բնակչության նահանջը գնդացրային կրակով ապահովող Սիհոնն Աչիկգողյանը: Խոկ Գետաշենի ինքնապաշտպանության հրամանատար Թաթու կրակելով իր լուսնի գնով դադարեցրեց խորհրդային գինվորների ու աղբեջանցի օնօնականների վայրագությունները[5]:

1991թ. մայիսի 6-ին 350 երկրապահ կամավորականները, որոնք մոտ երկու տարի պաշտպանել էին Գետաշենի Ենթաշրջանը, ստիպված լեռնային ճանապարհով հեռացան Հայաստան: 41 գոհվածներից 18-ը Հայաստանից մեկնած երկրապահ ազատարտիկներ էին: Արցախի գրեթե բոլոր շրջաններում թշնամուն լուրջ դիմադրություն էին ցույց տալիս տեղի և Հայաստանից եկած երկրապահ կամավորական ջոկատները[6]:

Ժամանակի մեջ 350 երկրապահ կամավորականները, ուրուսական անտառներում կենտրոնացած հայաստանյան կամավորական ջոկատներն ու տեղի ուժերն սկսեցին հակահարված տալ Ենթաշրջանի հայարավիման ծրագրերին: Կամավորները, Արևիկա-Տեր-Թաթառուսային ընդհանուր հրամանատարությամբ, օգնության էին հասնում հարձակման Ենթաշրջանի հայկական գյուղերին, ճշտելով օնօնականների երթուղիները, դարանակալում նրանց, հարկ եղած դեպքում հարձակվում էին օնօնի հենակետի ու

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

աղրբեջանական գյուղերի վրա և դրան գուգընթաց՝ թաքնվում անդադար իրենց որոնող զինվորական ուղղաթիռներից: Բոլոր այս ճնշումների դեմ հանդիման կանգնած էին հայ կամավորական ջոկատները: «Ինչ խոսք, - գրում է Ա. Տեր-Թադևոսյանը, - պատերազմական ողջ ծանրությունն ընկած էր առաջին հերթին արցախցիների ուսերին, սակայն այդ հիրավի թեժ պայքարից անմասն չէին նաև այն հայ կամավորականները, ովքեր հայրենիք փոխացին արցախականչին ունկնդիր: Ես բարձր եմ գնահատում նրանց դերակատարությունն այդ դժոնակ տարիներին: Նրանք մեր ազգի սերուցքն են ու եկան իրենց կյանքով փրկելու կորսույան եզրին գտնվող Հայրենիքը... Շատ-շատերն ընկան քաջին վայել մահով: Փառք, պատիվ ու հավերժ հիշատակ նրանց: Այդ պոտենցիալ մահապարտներից շատերն այսօր կենդանի են ու մեր շարքում, մեր խորին հարգանքն ու երախտագիտությունը նրանց ու պատմության անշարժ գնահատականը»[7]:

Հարութի շրջանի մի քանի գյուղերի հնքնապաշտպանական ջոկատների ընդհանուր հրամանատարն էր Էջմիածնի առաջին երկրապահ ջոկատի հրամանատար՝ Մանվել Գրիգորյանը, որը 1990թ. ձերբակալվելով ԼՂՀ-ում տեղակայված ԽՍՀՄ մերժին գործերի կողմից, դեկտեմբերին փախել էր բանտարկությունից: 1990-93 թվականներին մասնակցել էր ԼՂՀ հարավային սահմանների պաշտպանության համար մղված մարտերին[8]:

Հայաստանի և Արցախի երկրապահ կամավորականները փայլուն կերպով կատարեցին իրենց արջն դրված խնդիրները: Երկրապահ կամավորական ջոկատների հիմքի վրա էլ կազմավորվեց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ազգային բանակները:

1990թ. օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած Անկախության հոչակագիրը ազդարարեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական ու գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման գործում: Հռչակագրում հստակ նշված էր, որ «Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, մերժին գործեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Իրավական այս հիմքի վրա էլ նոյն տարվա սեպտեմբերի 20-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ հանրապետության ՆԳՍ (ՆԳՆ) կառուցում ստեղծվեց «Հատուկ գունդը», որը հատուկ ստորաբաժանումների հետ դարձավ ՀՀ զինված ուժերի առաջնեկը և ապագա կանոնավոր բանակի կողիզը: Այս ուներ Երևանում, Արարատում, Գորիսում, Վարդենիսում և հանրապետության այլ շրջաններում կազմավորված 26 վաշտերի[9]: 1991թ. ապրիլի 26-ին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր Հայաստանի Հանրապետության մինչև 50 տարեկան այն քաղաքացիների վրա, ովքեր ցանկանում էին կամավոր սկզբունքով մասնակցել հանրապետության պաշտպանության գործիքների[10]: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ), որի հիմքի վրա հետագայում ծևավորվեց պաշտպանության նախարարությունը[11]: Դարաբար և սահմանամերձ գոտիներ մեկնող երկրապահ ջոկատների համար Պաշտպանության կոմիտեին կից ստեղծվեցին մշտական գործող դասընթացներ, որտեղ ազատամարտիկները ստանում էին զենքի տիրապետնան և մարտական գործողությունների վարման մասին տարրական գիտելիքներ:

1991թ. դեկտեմբերի 5-ին հանրապետության նախագահի հրամանագրով ՀՀ պաշտպանության առաջին նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը (1959-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

1999թ.), ով, արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության համձնաժողովի նախագահ, կամավորների սիրված հրամանատարն էր: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ էր նրա ներդրումը: Վ. Սարգսյանի անմիջապես նախաձեռնությամբ 1992թ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ գորակոչված զինակոչիկների միջոցով ստեղծվեց լավ կազմակերպված շարժունակ ու կարգապահ բանակ[12]: «Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս Վազգեն Սարգսյանը կանգնած է եղել հայոց պետականության և հատկապես հայոց բանակի՝ որպես պետության առանցքային բաղադրիչի ստեղծման ակունքներում: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կլիներ հայոց բանակը, եթե այն չունենար Վազգենի հաղթելու կամքը, վճռականությունը, ամենադժվարին պահերին ամենաբարդ տեղում հայտնվելու քաջությունը, անսահման սեղը հայրենիքի ու զինվորի նկատմամբ», – նկատել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը[13]: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1992-1993թթ. բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: Վ. Սարգսյանը մեծ ավանդ է ներդրել ՀՀ սահմանամերժ շրջանների և Արցախի հնքնապաշտպանական ու ազտագրական մարտերի կազմակերպման գործում:

1992թ. հունվարի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ հրավարանորեն ազդարարելով հայոց բանակի ստեղծումը[14]:

Նորաստեղծ նախարարության ենթակայության համձնվեցին ներքին գործերի նախարարության միլիշտայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետության զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գիտավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սկսեց առաջին գորակոչը հանրապետության տարածքում հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համայնքելու կայուն ավանդույթին: Նոր կազմավորված գորամասերի անձնակազմը 1992թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը: Արծագանքելով պաշտպանության նախարարության կոչին՝ Հայաստան վերադարձան հայրուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին ԽՍՀՄ գորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ Գ. Ղալիբալիայնը, Ս. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատրյանը, Ա. Տեր-Թաթևոսյանը (Կոմանդոս) և շատ ուրիշներ[15]: Ստեղծվեցին սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցներ, ամրապնդվեց նրանց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման, բանակաշինության գործում մեծ է պաշտպանության նախարարներ Վազգեն Սարգսյանի, Վազգեն Մանուկյանի և Սերժ Սարգսյանի դերը: Հայոց բանակն աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց նորաստեղծ բանակը, 1992 թվականից Ղարաբաղում մասնակցելով պատերազմական լայնածավալ գործողություններին, կամավորական ջոկատների հետ միասին կրեց մեր առաջին ռազմական հաղթանակները:

Թե՝ Հայաստանը և թե՝ աշխարհասկյուռ հայությունը շարունակում էր սատար կանգնել Արցախին: Ազընդհատ երկրապահ կամավորական ջոկատներ էին մեկնում Լեռնային Ղարաբաղ:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

1991թ. օգոստոսի 30-ին Բաքվում տեղի ունեցած Աղրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը ընդունել էր անկախության վերականգնման հոչակագիր[16]: Դա նշանակում էր, որ Աղրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից 1918-20թթ. մուսավարական Աղրբեջանի հանրապետության սահմաններով: Փաստորեն դրանով Բաքուն հրաժարվում էր խորհրդային Աղրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում է, որ նրա կազմում չէին կարող լինել ոչ Նախիջևանը և ոչ էլ Լեռնային Ղարաբաղը: Ահա թե ինչու, օգտվելով հարմար պահից, 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում հրավիրված Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը ընդունեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին» որոշումը, որով նախկին ԼՂԻՄ-ում և Շահումյանի շրջանի տարածքում հոչակվեց անկախ հայկական պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) անվամբ[17]:

Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանրաքվեն հաստատեց ԼՂ անկախությունը: ԼՂՀ Գևո-ի նստաշրջանը 1992թ. հունվարի 8-ին հանրապետության Գևո նախագահ ընտրեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանին: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ: Ծուսով հաստատվեց հանրապետության պետական դրոշն ու զինանշանը: Առաջնային համարվեց Ղարաբաղյան հակամարտության գործում խաղաղ բանակցությունների գործընթացը: Սակայն աղրբեջանցիներն իրենց ռազմակայաններից սկսեցին անընդհատ ուժակոծել Արցախի բնակավայրերը:

1992թ. գարնանը Արցախում, բացի տեղում կազմավորված ինքնապաշտպանական ջոկատներից, կային Հայաստանից այնտեղ մեկնած տասնյակ ջոկատներ, որոնց գործողությունների համակարգումը դարձել էր կարևոր հարց: Այդ նույն թվականի մարտին ԼՂՀ Գևո նախագահությունը ստեղծեց պաշտպանության խորհուրդ և հանրապետության ընդհանուր ուժեղի հրամանատարության տակ դրեց ինքնապաշտպանության բոլոր կազմավորումները[18]:

1992թ. գարնանը խորհրդային բանակը, Հյուսիսային Արցախի զգալի մասը հանձնելով Աղրբեջանին, հեռանում է: Օգտվելով դրանից՝ ինքնապաշտպանական շատ ջոկատներ դուրս եկան ընդհատակից: Հիմնական խնդիրը դարձավ վերացնել Ստեփանակերտի շրջափակումը և աղրբեջանական բնակավայրերում տեղակայված կրակակետերը: Ներքին հրահանգավորում եղավ պարտիզանական պայքարի փորձ ունեցող երկրապահ կամավորական ջոկատներին՝ փոխհամաձայնեցված հակահարված հասցնել հակառակորդին: Այս հրահանգը վերաբերվում էր թե՝ Հայաստանի և թե՝ Արցախի բոլոր երկրապահ կամավորականներին:

Եթե Մարտակերտի շրջանում գործող ինքնապաշտպանական ջոկատները Կիշշանի, Չղդրանի, Հարությունագումերի, Պողոսագումերի տարածքներում խիզախորեն դիմակայում էին հակառակորդին, ապա Ասկերանի, Մարտունու և Հաղորդի կամավորական ջոկատները, Հայաստանից եկած կամավորների հետ սկսեցին ոչնչացնել թուրք-ազերիների բնակավայրերում տեղադրած կրակակետերը և դրանցից մաքրել հայկական տարածքները:

Արցախում գործող կամավորական ջոկատների թիվն օրեցօր ավելանում էր: Դեռևս 1991թ. նոյեմբերին Ստեփանակերտում տեղի ունեցած խորհրդակցությանը մասնակցեցին ԼՂՀ բոլոր շրջանների ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարները: Խորհրդակցությանը մասնակցեցին նաև Վազգեն Սարգսյանն ու գեներալ

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Գուրգեն Դալիբարյանը: Այստեղ էլ որոշվեց Արցախում ստեղծել պաշտպանության բանակ և պաշտպանության պետական կոմիտե:

1992թ. ամռանը ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրույթուն հայտարարելուց հետո օգոստոսի 15-ին ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն, որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը, իսկ շտարի պետ Արկադի Տեր-Թադևոսյանը: Արցախ-Հայաստանում գործող մարտական բոլոր ստորարածանումները մոտան մեկ ընդհանուր հրամանատարության տակ[19]: Արցախի և Հայաստանի երկրապահ կամավորական ջոկատների գործողությունները հետզհետև դարձան ավելի վճռական: 1991թ. հոկտեմբերից մինչև 1992թ. մարտ ազատագրվեցին Տող, Կրկժան, Մալիթելլու, Ղարադաղլու, Խոջալու բնակավայրերը և Վերացվեցին այնտեղ տեղադրված աղբեջանական կրակակետերը: 1992թ. սկզբից բացահայտ ընթանում էր հայ-աղբեջանական պատերազմական գործողություններ, որին մասնակցում էին տասնյակ կամավորական ջոկատներ: Հունվարի 26-ին տեղի ունեցավ Քարին տակ գյուղի հերոսամարտը, երբ 70 ազատամարտիկներ, մի ամբողջ օր հերոսաբար դիմադրելով, ետ մուցին մինչև ատամները զինված 250 ազերիների, զրահամեքնաների ուղեկցությամբ կազմակերպված գրոհը: Հակառակորդը, թողնելով 74 սպանված և 70 վիրավոր, ստիպված էր նահանջելու: Հայերից զրիվեցին 18 հոգի, այդ թվում ազատամարտիկներ Ս. Հայրյանը, Վ. Առուշանյանը և ուրիշներ[20]: Այս մարտերում իրենց հերոսությամբ աչքի ընկան երկրապահ կամավորական ջոկատները: Անառիկ ու հերոսական այս գյուղը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի կրակակետերը լուցնելու գործում:

1992թ. փետրվարի 26-ի Խոջալուի ազատագրումը հայ ինքնապաշտպանական ուժերի փայլուն գործողություններից մեկն էր:

Մարտերին մասնակցել են Հրազդանի, Սևանի, Երևանի «Մալաթիայի», «Մասունի», Մասիսի, Հայոց ազգային բանակի, «Ալաշկերտի», «Արամոյի», «Արաբոյի» և այլ երկրապահ կամավորական ջոկատներ:

Խոջալուի գործողությունները, որպես հայ կամավորականների համատեղ գործունեության լավագույն օրինակ, փայլուն իրագործվեց: Այդ գործողությամբ մասնակցած կամավորական բոլոր ուժերը դրսևորեցին հերոսության խկական օրինակներ: Դրան հաջորդեց Շուշիի ազատագրումը և Գորիսի հետ միացնող Ճանապարհի բացումը: 1992թ. մայիսի 8-ին և 9-ին իրագործվեց Շուշիի ազատագրումը և այնտեղի հակառակորդի կրակակետերի վերացումը, որին, ըստ Արկադի Տեր-Թադևոսյանի հրապարակած ցուցակի, մասնակցել է 2850 հոգի[21], որոնք ընդորկված էին 60 ջոկատներում: Շուշիի ազատագրման և Լաշխի միջանցքի բացմանը, բացի Արցախի ինքնապաշտպանական ուժերից, մասնակցել են նաև Հայաստանից եկած ջոկատները, որոնց թիվը հասել է 40-ի: Դրանց մեջ էին «Արամ Մանուկյան», «Աղամա», «Ալաշկերտ», «Արտաշատ», «Արամո», «Դաշնակցություն», «Զորավար Անդրանիկ», «Կումայրի», «Մերգելյան», «Կոռու», «Սասունցիներ», «Աֆղանցիներ», «Գարեգին Նժեհի», «Խաչակիրներ», «Սասնա ծռեր», «Սասունցի Դավիթ» և այլ ջոկատներ:

Մայիսի 9-ին Շուշիի և մայիսի 18-ին Լաշխի ազատագրումը բարձրացրեց հայ ժողովրդի մարտական ոգին և բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատագրվել պարտվողի հոգեբանությունից:

Լաշխի միջանցքով բացվեց կյանքի ճանապարհը, որով Արցախն ընդմիշտ կապվեց մայր հայրենիքին:

Գետաշենի անկումից հետո տասնյակ կամավորական ջոկատներ հանգրվանել էին Շահումյանի շրջանում, որտեղ ակտիվորեն մասնակցել էին շրջանի պաշտպանա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կան գործողություններին: Առանձնապես ակտիվ էին գործել «Արաբո», «Ալաշկերտ», «Տիգրան Մեծ» ջոկատները[22]: Ծովական պարտություն կրելուց հետո հակառակորդը, ուժերը կենտրոնացնելով Շահումյանի շրջանի ուղղությամբ, հունիսի կեսերին ներխուժեց այնտեղ, որի մոտ 16 հազար բնակչության ստիճանական էին բռնագաղթել Արցախ և այլ շրջաններ: Շրջանի բնակչությունը իր օրրանից հեռացավ երկրապահ ջոկատների և ինքնապաշտպանական ուժերի օգնությամբ: Թուրք-ազերինները, ներխուժելով Շահումյանի շրջան սրի ու հրի մատնեցին Էրքեջը, Սանաշիլը, Բողովիլը և այլ հայկական բնակավայրեր: Այս ժամը օրերին Շահումյանի շրջանում գոհկեցին 324 խաղաղ բնակչությունը և 75 ազատամարտիկները: Հակառակորդը նպատակ ուներ Շահումյանի շրջանը բռնագրավելու հետո ուժերը կենտրոնացնել Սարտակերտի շրջանի ուղղությամբ: Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Շահեն Մելքոնյանը ամեն կերպ փորձում էր բոլոր ուժերը միավորել և դիմակայել թշնամուն: Արցախի հյուսիսային դարպասները պաշտպանելու համար այնտեղ էին մեկնում նորանոր ջոկատներ Մոնթե Մելքոնյանի «Հայրենասիրական ջոկատը», «Աշտարակի երկրապահը», Ալավերդու կամավորական ջոկատը, «Ջերմոնկը», «Կոնդը», «Արգավանդը», «Հողաբերդը», «Շեմազակիրը», «Նիկոլ Դումանը» և այլն[23]: Այստեղ էին նաև Նոր Երզնկայի մարտախումբը, բաղրամյանցինների, նահրցինների, բուժականցինների, ալավերդցինների խմբերը: Վերոհիշյալ խմբերն ու պրոշյանցինների ջոկատը գործում էին Կարսու Մկրտչյանի ընդհանուր հրամանատարությամբ[24]:

1992թ. հունիսին ադրբեջանական զինված ուժերը գյանջայի շրջանում տեղաբաշխված ռուսական հաստուկ նշանակության դիվիզիաներից մեկի օգնությամբ կարողացան ճեղքել պաշտպանական գիծը և բռնագավթել Շահումյանի շրջանը:

Թշնամու կողմից բռնագրավված Շահումյանի շրջանում կազմակերպվել էր «Եղնիկներ» պարտիզանական ջոկատը, որը գիսավորում էր Շահեն Մելքոնյանը: Ցոկասի շարքերում հերոսաբար մարտնչում էին Հայաստանից եկած հարյուրավոր կամավորականներ:

Ծանր իրավիճակում էր հայտնվել նաև Արցախի Մարտակերտի շրջանը, որի տարածքի զգալի մասը զավթելով, հակառակորդը ենթարկել էր քաղաքի և ավերածության: 1992թ. ամռանը Շահեն Մելքոնյանի ջոկատը կարողացավ ազատագրել Մարտակերտի մի շարք գյուղեր՝ Հարերքը, Ականաբերդը, Մադաղիսը, Տոնաշենը, Դաստագիրը, Սարսանգի ջրամբարը: Գերամբոյի գումարտակի խայտառակ պարտությունը Սարսանգի ջրամբարի մոտ և ադրբեջանցինների խուժապահար փախուստը, որը նկարահանել էր Ա. Նևորովը և ցուցադրել ՈՂ հերոսապալիբներով, նոյնպես Շահենի ու իր հայդուկների հաղթանակն էր[25]:

1992թ. օգոստոսի վերջին այնտեղ հասավ գորահրամանատար Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ կազմավորված մահապարտների գումարտակը, որը, տալով բազում զիներ, արյունալի կրվում դիմակայեց մի քանի անգամ ուժեղ զինված հակառակորդին, որն այնտեղ էր կենտրոնացրել ավելի քան 7000 զինվոր: Խոսելով մահապարտների պիտագործությունների մասին՝ << նախագահ Սերժ Սարգսյանը շեշտել է, որ մահապարտները «ոչ միայն փայլուն հաջողությամբ կատարեցին իրենց մարտական առաջադրանքները, այլև նպատակների ու ոգու միասնականության ամենախոսուն հաղթանակը տարան: Հենց դրանով էլ ընդմիշտ մնացին ազգային-ազատագրական հերոսական պայքարի չերուում»[26]:

Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու, Հաղորդի շրջանների տասնյակ բնակավայրերի ազատագրման մարտերին, Քարվաճարի թշնամական հենակետերի ոչնչացման ռազմագործողություններին ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախյան

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2015

ազատամարտի նվիրյալ Պետրոս Ղևոնդյանի՝ պառշյանցի դաշնակցական Պետոյի հրամանատարությամբ գործող գումարտակը: Ծուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատարը ոչ միայն մշակեց Օմարի լեռնանցքի գրավման դժվարին ծրագիրը, այլև իր գումարտակով, առանց գոհ տալու, իրականացրեց այն[27]:

1992թ. աշնանը սկսվեց կամավորականների ներառումը պայմանագրային ծառայության կամոնավոր ստորաբաժնումներում: Այդ ընթացքում էլ նոյեմբերի 30-ին ստորագրվեց 5-րդ առանձին մոտոհրածգային կամավորական բրիգադի կազմավորման մասին հրամանագիրը, գորանաս, որին վիճակված էր մարտական փառավոր ուղի անցնելը[28]:

Հայաստանի և Արցախի երկրապահ կամավորականները փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Երկրապահ կամավորական ջոկատների հիմքի վրա էլ կազմավորվեց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ազգային բանակները, որոնք փայլուն հաղթանակներ գրանցեցին իրենց տարեգործության մեջ և կամավոր երկրապահների հետ միասին հաղթանակով ավարտեցին պատերազմը՝ ապահովելով մեր հայրենիքի մի մասի՝ ԼՂՀ ազատագրումն ու անկախ հանրապետության կայացումն ու զարգացումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տե՛ս, «Հայկական բանակ», N1-2 (31-32), էջ 14, 15:
- Տե՛ս նույն տեղում:
- Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 101:
- Տե՛ս Օհանյան Ա., Հայկական բանակի 20-ամյա տարեգործությունը, Եր., 2012, էջ 42:
- Տե՛ս Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 108:
- Սովորյան Ռ., Երկրապահ կամավորական ջոկատներն Արցախի պաշտպանության համար մղված մարտերում, «Պատմություն և մշակույթ», Եր., 2013, էջ 156:
- «Ազատ Արցախ», 22 մայիսի 2014:
- Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988–1994թթ. Հանրագիտարան, Եր., 2004, էջ 107:
- Տե՛ս ՀՀԱԱ, §113, գ163, գ. 406, գ. 6-9:
- Տե՛ս նույն տեղում:
- Տե՛ս նույն տեղում, գ. 317, թ. 1, 2:
- Տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերակոխումները Հայաստանի Հանրապետությունում, 1990-2003թթ., Եր., 2003, էջ 57:
- Տե՛ս, «Հայաստանի Հանրապետություն», 29 հունվարի 2002:
- Տե՛ս ՀՀԱԱ, §113, գ167, գ. 62, թ. 1, 2:
- Օհանյան Ա., 21-րդ դարի բանակը, Եր., 2007, էջ 11:
- Տե՛ս ՀԿԲ, Իстория и современность, Степанакерт, 1998, стр. 9.
- Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:
- Տե՛ս «Երկիր» N40, 5 մայիսի, 1992:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

19. Տե՛ս Մովսիսյան Ռ., Երկրապահ կամավորական ջոկատներն Արցախի պաշտպանության համար մղված մարտերում, էջ 156:
20. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգորությունը, էջ 58:
21. Տե՛ս Մովսիսյան Ռ., Երկրապահ կամավորական ջոկատներն Արցախի պաշտպանության համար մղված մարտերում, էջ 156:
22. Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, N3, էջ 126-127:
23. Մովսիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 157:
24. «Ապառաժ» ՀՅ Ղաշնակցության Արցախի կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթ, 17-18 փետրվարի 2014:
25. «Հայրենյաց պաշտպան», Արցախի ազատամարտիկների միության ամսաթերթ, նոյեմբեր, 2014:
26. Զանիբեկյան Գ., Մահապարտները, Եր., 2002, էջ 7:
27. «Ստեփանակերտ», 19 փետրվարի 2014:
28. Տե՛ս Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգորություն, էջ 115:

ԱՄՓՈՓՍԱԳԻՐ

**Հայ երկրապահ կամավորական ջոկատները
Արցախյան ազատագրական պայքարում
Էղիկ Մինասյան, Արարատ Վարդանյան**

Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում Աղրբեջանի սանձազերծած հարձակումները, խորհրդային գորքերի հետ միասին իրականացրած բռնարարքները ստիպեցին մեր ժողովրդի լավագույն զավակներին ստեղծելու կամավորական ջոկատները, պաշտպանելու մեր հայրենիքի սահմանները, աջակցելու մարտնչող Արցախին: Կամավորական ջոկատների հիմքի վրա էլ կազմավորվեց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ազգային բանակները, որոնք փայլուն հաղթանակներ գրանցեցին իրենց տարեգորության մեջ:

Բանալի բառեր՝ Արցախյան ազատագրական պայքար, Հայաստան, Արցախ, Աղրբեջան, Երկրապահ կամավորական ջոկատներ, ազգային բանակ:

РЕЗЮМЕ

**Армянские добровольческие отряды «Еркрапа» в Арцахской освободительной борьбе
Эдик Минасян, Аарат Варданян**

Развязные нападения Азербайджана на Арцах и приграничные районы Армении, насилиственные действия, осуществляемые совместно с советскими войсками, заставили лучших сыновей нашего народа сформировать добровольческие отряды для защиты границ нашей родины и помочи борющемуся Арцаху. Именно на основе добровольческих отрядов были созданы национальные армии Республики Армения и Республики Арцах, записав блестящие победы в своей летописи.

Ключевые слова: Арцахская освободительная борьба, Армения, Арцах, Азербайджан, добровольческие отряды «Еркрапа», национальная армия.

SUMMARY

**Yerkrapah Armenian Volunteer units during the Artsakh liberation struggle
Edik Minasyan, Ararat Vardanyan**

Azerbaijan indiscreet attacks on Artsakh and Armenia's border regions, acts of violence carried out jointly with the Soviet troops, made the best sons of our people form a volunteer corps to protect the borders of our country and help the struggling Artsakh. Particularly on the basis of these volunteer corps national armies of the Republic of Armenia and Artsakh Republic were created having written brilliant victories in their history.

Key words: *Artsakh liberation struggle, Armenia, Artsakh, Azerbaijan, volunteer corps of veterans, the national army.*